ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-60

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Հիմնաբառեր. *պարեն, անվտանգություն, սննդամթերք, ինտեգրում, ռիսկեր, հնարավորություններ, առևտուր, համագործակցություն*

Ներկա պահին աշխարհը շատ անհանգիստ է՝ պայմանավորված մեծ տերությունների կողմից նոր աշխարհակարգի ձևավորման և ազդեցության ոլորտների վերաբաժանման քաղաքականությամբ: Հայ-ադրբեջանական առճակատման անորոշ դադարը, ռուս-ուկրաինական՝ անկանխատեսելի հետևանքներով հղի պատերազմը, որտեղ Ուկրաինային աջակցում են ԱՄՆ-ն և Արևմտյան Եվրոպան, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում, հատկապես Սիրիայում, Իսրայելում և Եմենում շարունակվող բախումները, դրանց նկատմամբ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը, և, վերջապես, Չինաստանի ու Թայվանի և Հարավային ու Հյուսիսային Կորեաների միջև լարվածությունը լուրջ ահազանգ են համաշխարհային նոր աշխարհամարտի համար: Այս իրավիճակը, ինչպես նաև կլիմայի գլոբալ փոփոխության սպառնալիքները լրջորեն ազդում են միջազգային առևտրի և մարդկանց բարեկեցության բնականոն վիճակի վրա: Ավելին, լրջորեն վտանգված է ՄԱԿ-ի հռչակած Կայուն զարգացման նպատակների իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունը թեև ոչ մեծ տարածք ու սահմանափակ թվով բնակչություն ունեցող երկիր է, սակայն մեկուսացած չէ աշխարհում կատարվող իրադարձություններից և, ինտեգրված լինելով Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), այս կամ այն ձևով «կերպափոխվում է» համաշխարհային և տարածաշրջանային լարվածության «լույսի ներքո»: Այդ ազդեցությունը դրսևորվում է հատկապես ռազմաքաղաքական և տնտեսական ոլորտներում: Այդուհանդերձ, առավել զգայուն է պարենային ապահովման ոլորտը, քանի որ վերջինս ուղղակիորեն առնչվում է բնակչության ամենօրյա սննդի կամ, պատկերավոր

ասած, հանապազօրյա հացի ապահովմանը:

Հոդվածում քննարկվում են ԵԱՏՄ երկրների պարենային անվտանգության վիճակին, Միության ներսում պարենային ապրանքների առևտրին, մասնավորապես՝ ՀՀ-ի հետ համագործակցության հնարավորություններին և առկա ռիսկերին վերաբերող հարցեր:

Ներկայում գիտական գրականությունում և զանգվածային լրատվության միջոցներում «պարենային անվտանգություն» և «պարենային ապահովվածություն» հասկացությունները երբեմն նույնացվում են: Մինչդեռ դրանց հստակ տարանջատումն էական նշանակություն ունի երկրի պարենային հիմնախնդիրները պատկերացնելու և համապատասխան լուծումներ առաջադրելու համար: Միանգամայն անվիճելի է, որ, հանրային ընկալման առումով, բնակչության պարենային ապահովվածությունը չափազանց կարևոր է: Տնտեսագետների մեծ մասն այս հասկացությունը բնութագրում է որպես պետության կարողություն՝ երաշխավորելու երկրի բնակչության պարենային կարիքների բավարարումն այն մակարդակում, որն ապահովում է բնականոն կենսագործունեություն[1]: Ինչպես նկատում ենք, այստեղ չի մատնանշվում պարենի արտադրության աղբյուրը, այսինքն՝ չի ասվում, որ բնակչությանը պարենով մատակարարումն իրագործվում է տեղական արտադրության և ներմուծման արդյունքում: Մինչդեռ պարենային անվտանգության առանցքն ինքնաբավությունն է, տեղական արտադրության շնորհիվ՝ բնակչության կարիքների բավարարումը: Հայաստանում սննդամթերքի մի շարք կարևոր տեսակների՝ հացի և հացամթերքի, բուսական և կենդանական յուղերի, մսի, առավելապես՝ թռչնամսի ինքնաբավության մակարդակը դեռևս բարձր չէ: Հետևաբար՝ այս ամենի պակասը ներմուծման հաշվին լրացնելու և պտղի, բանջարեղենի, մրգերի ու հատապտուղների, ինչպես նաև սննդի վերամշակման արտադրանքի ավելցուկի արտահանման համար էական նշանակություն ունի ԵԱՏՄ շրջանակներում համագործակցության զարգացումը:

Ժամանակակից պայմաններում ԵԱՏՄ-ն Հայաստանի համար Եվրասիական տարածքում կայուն տնտեսական կապերի զարգացման կարևոր վեկտոր է, որն այս համատեքստում լայն հնարավորություններ և խոստումնալից տարածքներ է բացում արտահանման ներուժի կենսագործման ուղղությամբ:

Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին լիովին թույլ է տալիս, պահպանելով պետական ինքնիշխանությունը, ապահովել ավելի սերտ և ներդաշնակ տնտեսական համագործակցություն գործընկեր երկրների հետ: Դրան նպաստում են արտաքին առևտրի և մաքսային միասնական կարգավորումը, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի և այլ ոլորտներում փոխհամաձայնեցված քաղաքականության վարումը:

Դրա հետ մեկտեղ, բազմիցս շեշտադրվել է պարենային ապրանքների ընդհանուր շուկա ստեղծելու գաղափարը, որի իրագործումը թույլ կտա հաղթահարել կենսական նշանակության պարենային ապրանքների անբավարարությունը և իրականացնել միասնական պարենային անվտանգության քաղաքականություն: Իսկ բոլորովին վերջերս Եվրասիական տնտեսական հանձնաժողովը քննարկել է որոշ ապրանքատեսակների համար արտակարգ հիմնադրամ ստեղծելու հնարավորությունը: Դա անհրաժեշտ է ԵԱՏՄ երկրների շուկայի պակասուրդի դեպքում պարենային ապրանքների կայուն մատակարարման համար[2]: Այս նախաձեռնության հավաստիությունը կախված է անդամ երկրների քաղաքական կամքից և հիմնական պարենային ապրանքների կայուն արտադրության ու սպառման հաշվեկշռից: Իհարկե, այստեղ էական նշանակություն ունեն նաև այդ ապրանքատեսակների միջազգային պահանջարկը և արտահանման համեմատական առավելությունները: Ուստի առանձնահատուկ

[1] Алтухов, А. И. Вступление России в ВТО и проблемы развития ее сельского хозяйства / А. И. Алтухов // Агропродовольственная политика и вступление России в ВТО: сб. ст.: Никоновские чтения 2003. М.: РАСХН, 2003. С. 30-31.

[2] https://ctv.by/v-eaes-mozhet-poyavitsya-chrezvychaynyy-fond-po-otdelnym-prodovolstvennym-tovaram

կարևորվում է յուրաքանչյուր մասնակից երկրի պարենային ներուժի և արտադրության ծավալների, ինչպես նաև ներքին սպառման ու արտահանման իրատեսական գնահատականը:

Հարկ է նշել, որ 2021 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը հաստատել է ԵԱՏՄ անդամ երկրների պարենային անվտանգության ապահովման ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները: Ձևակերպվել է չորս սկզբունք.

1. ընդհանուր ագրարային շուկայում խըտրականության անթույլատրելիություն,
2. անդամ պետությունների ազգային շահերի և Միության նպատակների համակցում,
3. անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրների և Միության ընդհանուր ագրարային շուկայի կայուն զարգացման ապահովում,
4. միջազգային փորձի հիման վրա՝ անդամ երկրների պարենային անվտանգության գնահատում:

Ընդհանուր մոտեցումները ներառում են.

1. Ներկա պայմաններում անդամ պետությունների պարենային անկախության մակարդակի բարձրացում՝ ընդգրկելով հետևյալ ուղղությունները՝

ա) գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման խթանում՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման և գործարքային ծախսերի նվազեցման միջոցով,
բ) գյուղատնտեսության պետական աջակցության հարցերի շուրջ փոխգործակցության զարգացում,
գ) Միության ներսում օրգանական գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և շրջանառության զարգացման աջակցություն:

2. Գյուղատնտեսության ոլորտում անդամ պետությունների ապրանքների և սննդամթերքի փոխադարձ առևտրի ներուժի իրացում, մասնավորապես՝

ա) փոխգործակցության ապահովում գյուղատնտեսական ապրանքների պակասի և անբարենպաստ զարգացումների դեպքում,
բ) Միության շրջանակներում ագրոարդյունաբերության համալիրի զարգացման երկարաժամկետ կանխատեսման համակարգի կիրառում,
գ) գյուղատնտեսական մթերքի և պարենի պահպանման, բաշխման ու սպառման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

3. Երրորդ երկրներից անդամ պետությունների նյութատեխնիկական ռեսուրսների ներմուծման կախվածության նվազեցում, որը նախատեսում է՝

ա) գյուղատնտեսական կենդանիների բարձր արտադրողական, մրցունակ ցեղատեսակների ստեղծում,
բ) գյուղատնտեսական մշակաբույսերի ընտրասերման և սերմնաբուծության զարգացում,
գ) կերերի և կերային հավելումների արտադրության ժամանակակից տեխնոլոգիաների մշակում և կիրառում,
դ) անասնաբուժության և սննդի արդյունաբերության բնագավառների համատեղ ծրագրերի իրագործում:

Ի թիվս այդ պահանջների, նախատեսվում է նաև ազգային անվտանգության ամրապնդում, փոխադարձ առևտրի ներուժի իրացում, երրորդ երկրներից, նյութատեխնիկական ռեսուրսների ներմուծման առումով, անդամ պետությունների կախվածության նվազեցում[3]:

Վերոնշյալ որոշման հավելվածում ներկայացվում են նաև այդ սկզբունքների և մոտեցումների մշտադիտարկման արդյունքներն ու մեթոդաբանությունը:

Փաստորեն, ինտեգրացիոն գործընթացները բավական լայն հնարավորություններ են բացում ԵԱՏՄ երկրներում գյուղատնտեսական մթերք արտադրողների, այդ թվում՝ պարենային և վերամշակող ձեռնարկությունների համար, ինչը շատ կարևոր է պարենային անվտանգության ապահովման համատեքստում:

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ Եվրասիական տարածքի երկրներում հիմնական պարենային ապրանքնե-

[3] Общие принципы и подходы к обеспечению продовольственной безопасности государств-членов ЕАЭС. http://aquacultura.org/upload/files/pdf/%D0%95%D0%90%D0%AD%D0%A1_98.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Եվրասիական տարածաշրջանում հիմնական պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակը, 2021 թ., %[4]

	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Ցորեն	20	90	125	62	150
Կարտոֆիլ	101	100	104	99	88
Բանջարաբոստանային մշակաբույսեր	102	103	108	98	87
Մրգեր և հատապտուղներ	103	57	38	111	44
Միս՝ բոլոր տեսակների	61	134	82	87	101
Կաթ և կաթնամթերք	83	263	93	110	84
Ձու	100	128	100	90	98
Շաքար	12	141	8	68	100
Բուսական յուղ	1	220	91	11	117

րի ինքնաբավության մակարդակը բավական բարձր է: Ի դեպ, գրեթե բոլոր երկրներում անվտանգության շեմին մոտ են կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, կաթի, մսի և ձվի սեփական արտադրության ծավալները: Հացահատիկի ինքնաբավության առումով, տարածաշրջանի ամենախոցելի երկիրը Հայաստանն է, իսկ շաքարի մասով՝ Հայաստանը և Ղազախստանը: Ինչ վերաբերում է բուսական յուղին, ապա ամենացածր ինքնաբավություն ունեցող երկրներն են Հայաստանը և Ղրղզստանը: Դրան հակառակ, Ռուսաստանն իր ներքին պահանջարկից 50 տոկոսով ավելի հացահատիկ, իսկ Բելառուսը սեփական պահանջից ավելի քան երկու անգամ ավելի կաթ և բուսական յուղ է արտադրում: Բարձր է այս երկրի ինքնաբավության մակարդակը նաև մսի, ձվի և շաքարի առումով: Այս պատկերը վկայում է, որ հատկապես ԵԱՏՄ երկրները պարենային ապրանքների փոխադարձ մատակարարման մեծ ներուժ ունեն: Ընդհանրացնելով նշենք, որ, ըստ միջին հաշվարկների, Եվրասիական տարածաշրջանի երկրները, բացի մրգից և հատապտղից, մյուս հիմնական պարենային ապրանքների գծով գրեթե ինքնաբավ են:

Սննդամթերքի փոխադարձ առևտրի ազատականացումը մեծ չափով նպաստում է Եվրասիական տարածաշրջանի երկրների պարենային ապահովվածության մակարդակի բարձրացմանը: Դիցուք՝ վերջին 20 տարվա ընթացքում գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ արտահանման ծավալն աճել է 8,5 անգամ և 2021 թվականին հասել 15,4 մլրդ ԱՄՆ դոլարի, ինչը տարածաշրջանային գյուղատնտեսական արտահանման 3,6%-ն է: Եվրասիական տարածաշրջանի երկրների հետ փոխադարձ առևտրի զարգացումը թույլ է տալիս, առաջին հերթին, գործընկերային հարաբերություններ հաստատել Միության շրջանակներում և նպաստել պարենի տնտեսական ու ֆիզիկական մատչելիության ավելացմանը[5]:

Եվրասիական զարգացման բանկի «Պարենային անվտանգությունը և Եվրասիական տարածաշրջանի ագրոարդյունաբերական ներուժի բացահայտումը» նոր վերլուծական զեկույցում թվերի լեզվով ապացուցվում է, որ գյուղատնտեսությունը ողջ Եվրասիական տարածաշրջանի երկարաժամկետ տնտեսական մասնագիտացման առանցքային տարրն է: Հետազոտությունը ներառում է ԵԱՏՄ հինգ երկիր՝ գումարած Տաջիկստանն ու Ուզբեկստանը: Այսպիսով՝ հաշվարկները ցույց են տալիս, որ տարածաշրջանը ոչ միայն կարող է երաշխավորել սեփական պարենային անվտանգությունը, այլև մինչև 2035 թվականն ամբողջությամբ ապահովել

[4] Уровень самообеспеченности в ЕАЭС по большинству продуктов превышает 80-95% https://www.ra.am/archives/89603/
[5] Նույն տեղում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Հիմնական պարենային ապրանքների արտադրությունը ԵԱՏՄ երկրներում, հազ. տոննա[7]

Երկրները	2018	2019	2020	2021	2022
Հացահատիկ					
ԵԱՏՄ	141 826	147 991	164 443	146 709	190 580
Հայաստան	338	199	246	153	242
Բելառուս	6 070	7 232	8 661	7 320	8 701
Ղազախստան	20 274	17 429	20 065	16 376	22 031
Ղրղզստան	1 889	1 931	2 008	1 461	1 992
Ռուսաստան	113 255	121 200	133 463	121 399	157 614
Կարտոֆիլ					
ԵԱՏՄ	32 412	32 118	29 086	27 049	28 407
Հայաստան	415	404	437	365	351
Բելառուս	4 348	4 355	3 708	3 405	3 857
Ղազախստան	3 807	3 912	4 007	4 031	4 081
Ղրղզստան	1 447	1 374	1 327	1 289	1 275
Ռուսաստան	22 395	22 073	19 607	17 959	18 843
Բանջարաբոստանային մշակաբույսեր					
ԵԱՏՄ	26 666	27 709	27 743	27 291	27 589
Հայաստան	755	750	819	751	735
Բելառուս	2 687	2 953	2 797	2 726	2 862
Ղազախստան	6 225	6 737	7 016	7 547	7 353
Ղրղզստան	1 344	1 379	1 393	1 339	1 390
Ռուսաստան	15 655	15 890	15 448	14 928	15 249
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ խաղողը					
ԵԱՏՄ	6 108	5 919	6 430	6 700	7 306
Հայաստան	523	508	558	560	572
Բելառուս	968	560	796	632	845
Ղազախստան	392	395	445	443	443
Ղրղզստան	260	278	287	274	283
Ռուսաստան	3 965	4 178	4 344	4 791	5 163
Բուսական յուղ					
ԵԱՏՄ	6 728	7 670	8 404	7 670	...
Հայաստան	0,6	0,4	0,3	0,2	0,1
Բելառուս	386	418	460	491	...
Ղազախստան	389	477	485	430	663
Ղրղզստան	12	9	8	6	6
Ռուսաստան	5 940	6 766	7 451	6 743	8 140
Կաթ					
ԵԱՏՄ	13 240	13 556	14 010	14 172	14 557
Հայաստան	108	107	108	111	103
Բելառուս	1 222	1 236	1 281	1 249	1 221
Ղազախստան	1 059	1 121	1 169	1 231	1 241
Ղրղզստան	221	226	230	235	248
Ռուսաստան	10 629	10 866	11 222	11 346	11 744
Ձու, մլն հատ					
ԵԱՏՄ	55 512	55 182	54 783	54 530	55 981
Հայաստան	727	721	755	710	749
Բելառուս	3 360	3 511	3 491	3 525	3 462
Ղազախստան	5 591	5 531	5 066	4 838	5 052
Ղրղզստան	533	561	562	564	608
Ռուսաստան	44 901	44 858	44 909	44 893	46 110

[7] Достижение Целей в области устойчивого развития в Евразийском экономическом союзе. Статистический сборник / Евразийская экономическая комиссия. Москва, 2023. 184 с.

սնունդ՝ 600 միլիոն մարդու, այդ թվում՝ սեփական բնակչության (240 միլիոն) և լրացուցիչ 360 միլիոն մարդու համար՝ երրորդ երկրներում[6]: Սա նշանակում է, որ տարածաշրջանը լիովին ապահովում է իր պարենային անվտանգությունը: Ինքնաբավության ամենաբարձր մակարդակը հացահատիկի (132%) և բուսական յուղի (151%), ամենացածրը՝ մրգերի գծով է՝ 65% (աղյուսակ 1): Այնուամենայնիվ, տարածաշրջանի երկրների միջև պահպանվում են զգալի տարբերություններ ինչպես սննդամթերքի արտադրության, այնպես էլ սպառման առումով (աղյուսակ 2): Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, դիտարկվող հինգ տարիներին ԵԱՏՄ երկրներում հացահատիկի արտադրությունը 2018 թվականի 141,8 մլն տոննայից 2022 թվականին հասել է 190,6 մլն տոննայի կամ ավելացել 34,4%-ով: ԵԱՏՄ հնգյակից հացահատիկի արտադրության մեծ ծավալ ունեն Ռուսաստանը և Ղազախստանը: Հայաստանը բավարարում է իր պահանջարկի ընդամենը 24-25%-ը, իսկ հացահատիկի պակասը լրացվում է հիմնականում Ռուսաստանից ներմուծմամբ:

Կարտոֆիլի առումով, գրեթե բոլոր երկրներն ինքնաբավ են, իսկ բանջարաբոստանային մշակաբույսերի գծով ինքնաբավության բարձր մակարդակ ունեն Հայաստանը, Բելառուսը և Ղազախստանը: Պտղի և հատապտուղների գծով բարձր են հատկապես Հայաստանի և Ղրղզստանի ցուցանիշները: Ինչ վերաբերում է մսի արտադրությանը, ապա այստեղ Հայաստանը զիջում է ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներին:

Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ, կլիմայական և այլ պայմաններից կախված, սննդամթերքի որոշակի տեսակների՝ պահանջվող ծավալներով արտադրությունը կարող է լինել ոչ շահավետ կամ անհնար: Ուստի արտաքին առևտրի արդյունավետ կառուցակարգերի կիրառումը հնարավորություն է ընձեռում առաջնայնությունը տալու համեմատական առավելությանը և եկամուտ ստանալու ավելցուկային սննդամթերքի արտահանմամբ, ինչպես նաև դրա դիմաց ավելի ցածր գներով ներմուծելու որոշակի սննդամթերքի պակասող ծավալները, որոնք պարենային շուկան կլրացնեն ավելի նպաստավոր պայմաններով:

Եվրասիական տարածաշրջանում ագրոարդյունաբերական համալիրի ներուժի իրացումը խոչընդոտող գործոնը տրանսպորտային և լոգիստիկ սահմանափակումներն են: Այսինքն՝ Եվրասիական տարածաշրջանի երկրներում լոգիստիկայի և պահեստավորման համակարգերի թերզարգացման պատճառով գյուղատնտեսական արտադրանքի կորուստը հասնում է 40%-ի: Արդյունքում սննդամթերքի մոտ 70%-ը, որը կարելի է արտադրել տարածաշրջանի երկրներում, ներմուծվում է երրորդ երկրներից: Նման սահմանափակումները վերացնելու համար անհրաժեշտ է ունենալ կապակցված տրանսպորտային ենթակառուցվածք՝ ճանապարհների և երկաթուղիների, ծովային նավահանգիստների, սահմանային անցումների, մեծածախ բաշխման կենտրոնների, գյուղատնտեսական նյութատեխնիկական ապահովման օբյեկտների և այլնի տեսքով: Այս առումով, կարևորվում է լոգիստիկ համակարգի ինտեգրված զարգացման, ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա հիմնված միասնական եվրասիական տրանսպորտային երթուղու ստեղծումը[8]: Այստեղ ավելի բարդ է ու ռիսկային Հայաստանի հաղորդակցության ուղիների վիճակը: Մի կողմից, զուտ տնտեսական առումով, Հայաստանը Արևմուտք-Արևելք և Հյուսիս-Հարավ կապերի համար առանցքային երկիր է, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի տարածքային հավակնությունները և պանթուրքիզմի անթաքույց վտանգը թույլ չեն տալիս կիրառել բոլոր հնարավորությունները:

Միանգամայն ակնհայտ է, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմից և 2023 թ. սեպտեմբերյան դեպքերից հետո, երբ Արցախը հայաթափվեց, Հայաստանում ի հայտ են գալիս հակառուսական տրամադրություններ: Մինչդեռ Ռուսաստանը ԵԱՏՄ առանցքային երկիրն է, և այդ Միության գոյությունն անմիջականորեն

[8] Уровень самообеспеченности в ЕАЭС по большинству продуктов превышает 80-95% https://www.ra.am/archives/89603/

կապվում է ՌԴ-ի հետ: ԵԱՏՄ երկրների փոխհարաբերություններում Ռուսաստանի առաջնային դերը նկատելի է գրեթե բոլոր բնագավառներում, իսկ Հայաստանի պարագայում՝ հատկապես էներգակիրների և պարենի որոշակի տեսակների մատակարարման ոլորտում: Ուստի Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների սառեցումը Հայաստանի տնտեսական անվտանգության համար լուրջ ռիսկ է և ներկա պայմաններում անժխտելի սպառնալիք է պարունակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алтухов, А. И. Вступление России в ВТО и проблемы развития ее сельского хозяйства / А. И. Алтухов // Агропродовольственная политика и вступление России в ВТО: сб. ст.: Никоновские чтения 2003. М., РАСХН, 2003.
2. Шагайда Н. И., Узун В. Я., Гатаулина Е. А., Шишкина Е.А., Оценка состояния продовольственной безопасности Российской Федерации. [Текст] / Шагайда Н. И., Узун В.Я., Гатаулина Е.А., Шишкина Е.А. Институт прикладных экономических исследований РАНХ и ГС. М.: 2020.
3. Кузнецов, А., Бердигулова, А., Федоров, К., Долговечный, А., Бабаджанян, В. (2023) Макроэкономический обзор ЕАБР. Апрель 2023. Алматы: Евразийский банк развития.
4. Уровень самообеспеченности в ЕАЭС по большинству продуктов превышает 80-95% https://www.ra.am/archives/89603/
5. Достижение Целей в области устойчивого развития в Евразийском экономическом союзе. Статистический сборник / Евразийская экономическая комиссия. Москва, 2023. 184 с.
6. Мониторинг взаимных инвестиций ЕАБР Центр интеграционных исследований Дирекция по аналитической работе ЕАБР 18 ноября 2021 г Презентация PowerPoint (eabr.org)
7. Общие принципы и подходы к обеспечению продовольственной безопасности государств-членов ЕАЭС. http://aquaculture.org/upload/files/pdf/%D0%95%D0%90%D0%AD%D0%A1_98.pdf
8. Ալմաթիում տեղի է ունեցել Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը, https://www.primeminister.am/hy/press-release/item/2024/02/02/Nikol-Pashinyan-Session-Eurasian-Intergovernmental-Council/

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

ВОЗМОЖНОСТИ И РИСКИ РАЗВИТИЯ СОТРУДНИЧЕСТВА В ОБЛАСТИ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ СТРАН ЕАЭС

В настоящее время мир очень обеспокоен. Это связано с политикой формирования нового мирового порядка и перераспределением сфер влияния. Армяно-азербайджанское противостояние, российско-украинская война, продолжающиеся противостояния в странах Ближнего Востока, особенно в Сирии, Израиле и Йемене, а также напряженность Китай-Тайвань, являются серьезной тревогой в контексте новой мировой войны. Эта ситуация, а также угрозы глобального изменения климата серьезно влияют на нормальное состояние международной торговли и благосостояние людей. Более того, реализация заявленных ООН Целей устойчивого развития находится под серьезной угрозой.

Хотя Республика Армения является страной с небольшой территорией и ограниченным населением, она не изолирована от мировых событий и интегрирована в Евразийский экономический союз (ЕАЭС), но в той или иной мере подвержена влиянию глобальной и региональной напряженности. Это влияние особенно проявляется в военной, политической и экономической сферах. Тем не менее, сектор продовольственного обеспечения является более чувствительным, поскольку он напрямую связан с повседневным питанием населения, или, образно говоря, обе-

спечением хлебом насущным. В данной статье представлено состояние продовольственной безопасности стран ЕАЭС, торговля продуктами питания внутри союза, в частности возможности сотрудничества с Арменией и существующие риски.

Ключевые слова: *продовольствие, безопасность, интеграция, риски, возможности, торговля, сотрудничество*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Economic Sciences, Professor

SECURITY AND CHALLENGES

OPPORTUNITIES AND RISKS OF COOPERATION DEVELOPMENT IN THE FIELD OF FOOD SECURITY OF EAEU COUNTRIES

At present, the world is very concerned. This is connected with the policy of the formation of a new world order and the transfer of spheres of influence on the part of the great powers. The indefinite cessation of the Armenian-Azerbaijani conflict, the unpredictable Russian-Ukrainian war, in which the USA and Western Europe participate in supporting Ukraine, the ongoing confrontations in the countries of the Middle East, especially in Syria, Israel and Yemen, the position of the Islamic Republic of Iran in them and, finally, China-Taiwan and the South, as well as the tension between North Korea, are serious concerns about a new world war. This situation, as well as threats of global climate change, seriously affect the normal state of international trade and people's well-being. Moreover, the implementation of the declared UN Sustainable Development Goals is under serious threat.

Although the Republic of Armenia is a country with a small territory and a limited population, it is not isolated from world events and is integrated into the Eurasian Economic Union (EAEU), but it is to one degree or another subject to the influence of global and regional tensions. This influence is especially evident in the military, political and economic spheres. Nevertheless, the food supply sector is more sensitive, as it is directly related to the daily nutrition of the population, or, figuratively speaking, the provision of daily bread.

This paper presents the state of food security in EAEU countries, trade in food products within the Union, in particular, opportunities for cooperation with Armenia and existing risks.

Keywords: *food, security, food, integration, risks, opportunities, trade, cooperation*